

ԲՐԱՒՈՒՆ

ԼՐԱԳՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Père G. Kalemkarian, Michitaris
te ngasse № 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առաստախմանի համար (Երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Ամերիկայի » 2.60 տղ. վեցամս 1.50
ՀԱՆԿԻՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԸ

Նախնային դրամ եռայնը դրկիլ հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՒՈՒՆ» ԼՐԱԳՐՈՒՄ — ՎՍԻՆԱ (Պուլխարիս)
Редация на Вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Iravounk“
V A R N A (Bulgarie)

Ամսագրութեան ուղղեալ գրութիւնը
ես չեմ որոշիր եւ յարմար դատած
ներք միայն կը հրատարակուի աւ.
բողոքովի կամ մասամբ.
Մանուցման տղը 20 սանթիմ. երե-
ւեմ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը դին :

ՕՐՈՒԱՆ ՆԻԻԹԵՐ

Սոցիալ շարժում Պուլխարիոյ հա-
յաբնակ մէկ քաղաքէն տրուեց
կը յայտնէին ոմանք թէ վարդա-
նանց տօնին օրը եկեղեցւոյ մէջ
կատարուած հանգէսին ազգայինի
մը ատենաբանել արգիւրուած է բո-
ղոքական ըլլալուն պատճառաւ :

Կը հարցնեն մեզ «վարդան» և
իւրայինք բոլոր հայութեան չեն
վերաբերիր. ինչու տարբեր յարա-
նունութեան պատկանող հայերու
մասնակցութիւնը արգիւրուի վար-
դանանց ազգային հանգէսին :

Մենք այս տրուեցին սկզբուն-
քը արգար կը գտնենք : Այո՛ պէտք
է արգիւրել հայ բողոքականի մը
կամ կաթողիկի մը մասնակցութիւ-
նը ոչ միայն ազգային հանգէսի
մը, նոյն իսկ կրօնական արարողու-
թիւններու, պայմանաւ որ այդ
մասնակցութիւնը օրինաւորու-
թեան շրջանակէն աւելի չ'անցնի :

Մեր ազգային եկեղեցիներ քրիս-
տոնեութեան մէջ խտրութիւնը ու-
զին սկիզբէն ի վեր չէ ունեցած .
որչա՞ք որ տարբեր եկեղեցիներ
զինքը հալածած են, ինք զա-
նոնք միշտ քոյր անուանած է :

Այսպէս ալ Հայ եկեղեցւոյ հա-
րազատ զաւակներն բոլոր քրիստոն-
եայները եղբայր կոչած են,
հոգ չ'ընելով թէ այդ եղբայրը
զինքը կը հալածէ : Արդ որչա՞ք տ-
ւելի հարազատ եղբայրներ են այն
հայերը որոնք ունեն անհաշու
բով, ուրիշ եկեղեցիներու գերիւր
նետուած են դժարաբարբար, բայց
առանց հայ ըլլալէ դադարելու :

Մեր եկեղեցիներն դուռը բաց
ձգուած փարախ մըն է, մուտքը
և ելքը ազատ : Մենք կը ցաւինք
միայն այդ փարախէն ելնող այն
հայուն համար, որ իր կրօնական
չուարումին հետ կը կորսնցնէ ազ-
գային զգացումն ալ : Իսկ ուրախ
կըլլանք երբ փարախէն դուռը զըտ
նուաղ եղբայր մը չի հեռանալ, այլ
զրան առջև կը դեգերի ու չի
դադարիր իր եղբայրներուն հետ
սերտ յարաբերութիւն ունենալէ :
Աններելի ոճիւր մըն է, մեր տեսա-
կէտով, այդպիսին գրան առջեւէն
բոլորովին վանելը :

Եսամուրթեան մեր մէջ գործած
աւերները սկիզբէն ի վեր անթու-
ելի եղած են :

Եսամուրթեան իրենց այդ հիւան-
գութեան մէջ այն աստիճան առաջ
կերթան որ, այլ ևս ամեն նուիրա-
կանութիւն, ամեն սրբութիւն,
հանրային ու ազգային արժանա-
պատուութիւն բոլորը կը զոհեն :
Ոտքի տակ կ'առնեն, միայն ու մի
այն իրենց եւր առաջ զշերտ իրենց
կամքին կամ քմահաճոյքին՝ դոհա-
ցում տուու համար :

Ահա այս կարգէն է վաշխառուի
խմբակին մէկ նոր շահատակու-
թիւնը, որ ուղղուած է նորընտիր
հոգաբարձութեան դէմ, կամ աւե-
լի ճիշդ է ըսել, վառնայի ազգայ-
նոց ահագին մեծամասնութեան
կամքին դէմ, որ գործնականապէս
ցոյց տրուեցաւ վերջին քուէարկու-
թեան օրը :

Երանօք վաշխառուին մատի վրայ
համրուող մէկ քանի կենդանի գոր-
ծիքները իրենց ստորագրութեամբ
վերջապէս կ'առաջարկութեան դի-
մած են, որպէսզի սա բեկանէ նո-
րընտիր հոգաբարձութեան ընտրու-
թիւնը. այսինքն հայ ազգին իր
վարժարանները վարելու համար
յայտնած կամքը ու վստահութիւ-
նը իրենց քմահաճոյքին կողմէն
զոհել, կ'առաջարկութեան մատնանիշ
ընելով թէ՛ ընտրուածներէ մին
փելիպպոս Հալաճեան երոպական
ընկերութեան մը ներկայացուցիչ
է, որ կ'ընայ տեղափոխուիլ. թէ
ընտրուածներէ երկուքը ալ ՄԻՆ-
բան Զգոնեան և ուրիշ մը, օրինա-
կան տարիքը լրացուցած չեն, ուս-
տի Պուլկ. օրէնքը չի ներեր որ
անոնք հոգաբարձու ըլլան :

Այս անտեղի առարկութիւնները
որոշապէս կը ցուցնեն թէ անոնք
ազգին կամքը ոտքի տակ առնելէ
զատ ուրիշ նպատակ չ'ունին : Պ.
Փ. Հալաճեան տասը տարեկէ ի
վեր գիտենք թէ վառնայէ երկու
շարժթ բացակայ գտնուած չէ,
ու մօտ տարիներու մէջ ալ չի պի-
տի բացակայի : Նոյնպէս Պ. Մ.
Զգոնեան թէ ևս հոգիւ 25—26 տա-
րեկան, բայց վառնայի երիտա-
սարգութեան ամենէ կարող մէկ
ներկայացուցիչն է, որ 5—6 տա-

րի առաջ վենետիկի մէջ Միւ-
թարնանց բարձր վարժարանի չըր-
ջանը աւարտելէն ի վեր հոս պա-
տուաւոր տան մը մէջ առաջին
քարտուղարի պաշտօն կը վարէ ու
միշտ տրամադրելի ժամեր ունի
սոցալին գործերով ալ զբաղե-
լու :

Ընթերցողք, կը տեսնէ՞ք եսամ-
ութիւնը գործերը մինչեւ ուր կը
տանի : Բարձրագոյն վարժարանի
մը շրջանաւարտը հոգաբարձու-
թեան անդամ ընել չ'են ուզեր,
հակառակ ժողովրդեան կամքին,
իսկ անդին երկու բառ հայերէն
խօսել իսկ չի գիտցողը հոգաբար-
ձութեան և թաղականութեան մի-
անգամայն Ատենապետ կ'ընեն ու
կը ջանան որ այդպէս ալ մնայ
ցվիր :

Եթէ այս անգամ ալ յաջողին,
վառնայաբնակ հայեր խելքը տե-
սէք ձեր վարժարանին :

Գոռայէր

ԱՐԹՆՈՒԹԻՒՆ

Վրդովիչ ու չարաշուք ազմուկ-
ներ կը թուին Հայաստանի մէջ
նոր ջարդեր ազդարարել : Կարծիք
յիմարութիւնը նոր զայրագնում
մը ունենալու է : Այս անգամ Եւ-
րոպան պիտի ձգէ ըլլալիքը : Ար-
դէն մեծ ոճիր մը գործեց ամբողջ
ժողովուրդը մը զոհելով Սուլթանի
մուկեզնութեան ու դիւանագիտա-
կան ծածկահարքներու : Այս ան-
գամուան ոճիրը աւելի մեծ պիտի
ըլլայ, վասնզի այժմ փորձուած է
թէ ինչ ահաբեկ արդիւնքներու կը
հասնին անհամաձայնութիւնները,
մրցակցութիւնները ու հաշիւները :

Ահա այս պատճառաւ խորհուրդ
կուտանք ֆրանսական կառավարու-
թեան որ մեր քաղաքականութիւ-
նը ծայրագոյն Արեւելքի արկա-
ծին մէջ չի խարամուղէ : Նախ
պէտք է որ ազատ մնայ որպէսզի

իր զօրութիւնը բիրտ ու անար-
դար ձեռնարկներու մէջ չի վատ-
նէ ու կարենայ, առաջը առնել,
արթուն հաստատամտութեամբ մը
մարդկութեան դէմ պատրաստուող
նոր ոճիրներուն : Հայկական ջար-
դերու ու Եւրոպական անտարբե-
րութեան կամ մեղսակցութեան
կրկնութեանը պարագային, քա-
ղաքակրթութեան գաղափարն իսկ
փուճ բան մը պիտի ըլլայ :
«Բրո Արմենիա» ԺԱՆ ԺՈՒԷՍ (*)

ՀԱՅ ԲՆԱՅՉՈՒԹԻՒՆԸ

Բարիզի մէջ գումարուած խա-
ղաղութեան համաժողովին 4 հոկտ-
եմբերին մէջ մեր թուրք պաշտօնա-
կից Ահմետ Րիզա ի նպատակ Հա-
յաստանի ներկայացուած Յիշատա-
կաբէին ընդդիմախօսել կարծեց
պնդելով ի մէջ այլոց, թէ հայերը
թրքահայաստանի բնակչաց փոք-
րամասնութիւնը կը կազմէին. և թէ
հայերու բնակած գաւառներուն
մէջ մեծամասնութիւնը կազմողնե-
րն էին ֆրիզներն ու թուրքերը :

Այս խոշոր սխալը նոյն իսկ այն
օրն համաժողովին մէջ դիտել տա-
լու պարտաւոր է թէ ևս սակայն ոչ
նուազ կարեւոր ուրիշ խնդրոյ մը
վիճաբանութիւնն ստիպեց զիս
լուել սոյն սխալն ապագային մէջ
տեղ հանելու մտադրութիւնն ինձ
պահելով :

1877ի Ռուսո—թրքական պա-
տերազմէն վերջը Օսմանեան կա-
ռավարութիւնը Ասիական նահանգ-
ներն այնպէս մը բաժնեց որ Մահ-
մետական ցեղերն բնակչաց մեծա-
մասնութիւնը կազմեն : Եւ այս
արդիւնքը ձեռք բերելու համար
ստիպուեցաւ Հայերու մեծամասնու-
թիւնը կազմող գաւառներու սահ-
մանները կերպարանափոխել, և
զանոնք միացուց դրացի նահանգ-
ներու հետ : Արդարեւ ահա ինչու
համար եւրոպական տէրութիւննե-
րն 1895 Մայիս 11 ին Սուլթա-
նին ներկայացուցած իրենց Յիշա-

(*) Ժան Ժոուէս «Բըթի Ռէբլէքի-
ք»ի տնօրէնն է. ֆրանսական խորհր-
դարանին մէջ բնակութեան ներքու
պետն է եւ իր ֆրանսայի էն պերճա-
բան աստիճանը կը նկատուի :

տակագրին մէջ պնդեցին որ Հայաստանի նահանգներու բաժանումը ազգագրական տեսակէտով ըլլալ և նախկին բաժանումն պահպանուի:

Թարգմ. Կ. Բաւմանեան
Յուսիկ Տնօրէն «Դաւանդ»-ի

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Վառնայի երկսեռ Որբախնամ ընկերութեան Գործ. Ժողովն կուգայ հրապարակաւ իր խորին շնորհալիքը յայտնել իսկիցի ազնիւ ազգայնոց և նա ժանաւանդ նորընծայ քնն. Արթ. Տէր Վաղինակ Տ. Մինասեանի որ բարեհաճած է անտէր որբերու անուան 80 ութնուն ֆրանքի գումար մը հաւաքել ու մեզ զրկել:

Ինչպէս կերելի Արթ. Տ. հայրը իր նոր ընտրած ասպարէզին մէջ օգտակար դառնալու մտքը ամենա. նուիրական պարտք նկատած է որբերու նուիրական գործով զբաղել:

Միշտ փափաքելի է յուսալ որ Պուլկարիոյ զանազան կողմերու հովիւներ ևս 'ի նկատի ունենալով զի ըրոյ յիշալ կղերականին օրինակելի ընթացքը պիտի փութան կատարել իրենց պարտականութիւններ հանգէպ անտէրուն զորին:

Մնամք յարգանք
'ի գիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Յ. Ճանկիրեան Տք. Դաւանդեան

ՑԱՆԿ ՆՈՒՒՐԱՏՈՒՆԵՐՈՒ

Սթարա Զակորա քաղաքէն շէվ. ահ.	
Տիար Սարգիս Կարապետեան	10.—
» Յովակիմ Սերոբեան	2.—
» Որբաւէր ոմն	5.—
» Յովհաննէս Յակոբեան	4.—
» Միքայէլ Մկրտիչեան	2.—
» Սիմօն Մէճէլեան	5.—
» Յ. Շրլահանեան	2.—
» Կարապետ Թէրզեան	3.—
» Կ. Ֆէլէմէնկեան	2.—
» Յ. Մէքթուպեան	1.—
» Սիրական Շահրէկեան	1.—
» Ա. Տ. Մինասեան	1.—
» Աբրահամ Գարայեան	1.—
» Ղազար Սալաւաթեան	1.—
» Պարոն Սալաւաթեան	4.—
» Հայրապետ Սիմօնեան	50
Նովա Զակորա քաղաքէն	
» Եսայի Սալաւաթեան	2.—
» Յ. Կ. Սուրբաթեան	2.—
» Համ. Կիրակոսեան	50
Իսկիմիա քաղաքէն	
» Սալիկ Թոհաֆեան	5.—
Տեարք Յովհաննէս Կարապետեանի և Ալիքան Գլորեանի հարսանեաց հանդէսին առթիւ պնակէ գոյացած	12.—
Վարդանանց հանդէսի պնակի հասոյթ	14.—
	80.—

ՀԱՇՈՒՆԵԿՈՒՄ

ՈՒՍՈՒՄՈՒՄԻ ԱԶԳ. ՊԵՐԱՀԱՆԴԵՍԻՆ

ՄՈՒՏԻՔ

1. Հասոյթ մօտից տոմսակներէ	349.30
2. Հասոյթ պիւֆէէն	131.70
3. » հանդերձապահէ	6.35

4. » վիճակաւագէ	218.—
5. Նուէր Լոկոթէթիտիս, Գալմի կատու	22.80
6. Նուէր Սարգուս Բինքաս	20.—
	748.15

ԵԼՔ

1. Պիւֆէի ծախք	109.—
2. Փոխադրութեան ծախք	8.75
3. Սպասուողներու »	24.50
4. Լուսաւորութեան, ջերմութեան եւ այլն	34.05
5. Վիճակաւագի համար գնուած առարկաներ (1)	18.20
6. Տոմսակներու տպագրութեան	25.90
7. Նուագածուներու եւ պարագեան	38.—
	258.40
8. Զուտ հասոյթ	489.75
	748.15

Ի գիմաց Կարգադիր մասնախմբի Ատենադպիր Ատենապետ Գ. Յ. ԱՄԼԱՆԵԱՆ Ն. Գ. ՔԷՍՏԱՆԵԱՆ Սոյն գումարէն հոգաբարձութեան բաժինը 245 ֆր. ստացած ենք 7 փետրվար 1901

Ի գիմաց հոգաբարձութեան Մեսրոպեան վարժարանի

Վ. Ատենադպիր Ատենապետ Վ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Գ. ԱՍԼԱՆԵԱՆ

Կնիք Հոգաբարձութեան Սոյն գումարէն Աղք. Ընկերութեան նշո բաժինը 244 ֆր. 75 սանթ. ըստացած ենք: Ռուստուք 7 փետրվար 1901:

Ի գիմաց Աղք. Ընկերութեան

Վ. Ատենադպիր Ատենապետ Տօք. ԱՃԷՄԵԱՆ Ն. ՔԷՍՏԱՆԵԱՆ

Կնիք Աղխատախանի

ԵՐՈՒՄՆԻ ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆԻՆ

Ձեր հասցէին ուղղուած սպառնադրի մը բուն հեղինակը գտնելու մարմալէն բռնուած, կուզէք հաւատալ, թէ Տ. Տօքթ. Դաւաթեան իմ և մէկ ալ ձեր բարեկամ Պ. Յ. Խաչիկեանի ներկայութեան յայտարարութիւն ըլլալ թէ՛ «պէտք է գործադրել այդ սպառնալիքը»:

Ես, իմ մասին, առանց գիտնալու թէ Տիար Տօքթ. Դաւաթեան որ աստիճան կը զարգուի Սրմաքէշխանեանի մը խնդրով, չեմ դադարի խոստովանել թէ, Տիար Տօքթ. Դաւաթեան իմ ներկայութեան երէք չէ ունեցած նմանօրինակ յայտարարութիւն մը եւ թէ հետեւաբար շատ անհեթեթ կը գտնեմ այդ մասին իմ ալ վերկայութիւնս մէջ բերել:

Իսկ գալով ինձ նկատմամբ ըրած ակնարկութեանցդ, կը փութամ ամեն բանէ առաջ յայտարարել որ, ԵՐՈՒՄՆԻ ԶՊԻՏԻ ԶԻՋԱՆԻՄ ձեզ նման . . . անցեալ ունեցողի մը հետ գործ ունենալ:

Թ. Կ. Ճանկիրեան
Վառնա, 22 փետր

—) (—

(1) Տեղւոյս հայ վաճառատուններէն ոմանք վիճակաւագի շատ մը առարկաներ նուիրեցին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կը խնդրեմ այս անգամ եւս հաճեցէք անկիւն մը շնորհել հե. տեւեալ տողերուս:

«Դաւաթեան» իր նամակատուփէն, անձին դէմ քանի մը երախայա. կան ակնարկութիւններ նետելով, կարծած էր պատասխանած ըլլալ այն երկտողիս, որ հրատարակուեցաւ թիւ 6 «Իրաւունք»-ի մէջ: Արհամարհոտ լուրթեամբ մը պիտի անցնէի, եթէ անձնականէ դուրս, նոր խճճանք մը լերիւրած չըլլար:

— Ես չէի գրած թէ դրամը մի միայն իմ հօրս անձնական քսակէն տրուած է, այլ Աստաբաճեան եղբայրներու, անտուկէն, որոնք զատ զատ մարդիկ են եւ իրենց ուրոյն տունն ու ընտանիքը ունին:

Ի հարկէ «Դաւաթեան»-ի նամակատուփը խմբագրող պարոնը՝ գոնէ այդ պարզ հայերէնը կը հասկնար, սակայն ինչպէս կերելի, իր քերթին հսկայ շուքէն անդին ամեն բան կը մոռնայ, երբ կարգը խճճածու կուգայ:

Ես փողարը չեմ եղած հօրս, որ՝ կարգ մը ողորմելիներու պէս, պէտք ու սովորութիւն չունի իր ու եւ մէկ պարտականութիւնը կատարած ըլլալը տանիքներէն քսրողելու:

Ու եթէ այն հերքումը տուի, պատճառը ո՛չ թէ մեր անունին չլիշատակուիլն էր, այլ այն կեղծ, նպատակաւոր ռեքլամը, զոր ըրած էր «Դաւաթեան»-ի թղթակիցը սուտ տեղեկութեանց արձագանքը դառնալով:

Այո՛, միեւնոյն աղքատին մէկէ աւելի մարդիկ դրամ կրնան տալ: Եւ «Դաւաթեան»-ի նամակատուփը նոյն իսկ կարող էր յայտարարել թէ «Դաւաթեան» բոլոր անդամակիցները 25 ական ֆրանք զրկած են: Ռեքլամի համար տառնակ պոչաւոր սուտ մը չիլիլ հնարաւոր էր:

Բայց երբ միեւնոյն ատեն ելլել, բսել թէ՛ բոլոր դրամներն ալ միեւնոյն փակելին, միեւնոյն գեղազրին յատկացուած են. ա՛յ միթէ ձաղրելի չէ՛ր ըլլար:

«Աս ինչ փակելը է որ այդքան սուղ գին ունի. . . » չէ՛ին հարցնել մարդիկ:

Արդ, աղքատ կնոջ մը ծննդաբերութեան անմիջական ծախքին և բեռնակիրներուն համար մեզմէ առնուած է 25 ֆր., որ սուղագած իմ թէ նոյն նպատակով ալ ծախսուած է: Ուրեմն իրաւունք չունիմ հերքելու, երբ «Դաւաթեան», այդ նոյն դրամը ուրիշին կը վերագրէ:

Եթէ ընդունինք որ նոյն գործին համար ուրիշ մէկն ալ 25 ֆր. զրկած է, եւ եթէ Օր. Ս. . . եանն ալ նոյնը հաստատելու համար հըրապարակ նետուի. նորէն «Դաւաթեան» չի կրնար իր սուտին և հա. կասութեան մէջէն դուրս ելնել, որովհետեւ այդ պարտաւային, ՅԻ. լիպէն Գալաճըզ զրկուած դրա.

մը կըլլայ 50 ֆր. և ո՛չ թէ 25 ֆր., ինչպէս կըսէր «Դաւաթեան»-ի թղթակիցը:

Ականջ ունեցողը թող լսէ: Իսկ Դաւաթեան վերջնականապէս թո՛ղ հասկնայ թէ՛ ամեն մարդ չի կըլլեր իր սուտին ու խճճանքները որոնց կարգը անցած է ալիւս:

Թ. Պ. Աստաբաճեան
Փ. Պուլիս, 18 փետր. 1901

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ Էտուարտ Թագաւորը իր անձնական քարտուղարին մի. ջոցու շնորհակալութիւն յայտնած է Ամերիկայի Ազգային յանձնա. խումբի ատենապետ Տ. Գաբրիէլ: Եանի, այն ցաւակցական ու հա. մակրական արտայայտութեանց համար որ նոր Թագաւորին ուղղուած էր վիքտորիա Թագուհւոյն մահուան և իր գահակալու. թեան առթիւ:

— «Նոր Կեանք» վերջին թիւը կիմացնէ թէ Կիլիկիոյ մէջ նոր կոտորածներու պատրաստութեան լուրերը Եւրոպա հասած ըլլալով, ֆրանսական կառավարութիւնը իրը աղքարարութիւն, հինգ մարտու. նաւ զրկած է Կիլիկիոյ ջուրերը: Նոյնը գրած էր նաեւ «Բըօ Ար մէնիս»:

— Կովկասի իշխանութիւնը ո. բոշած է Թիֆլիսի արհեստանոց դպրոցներէն տեղական լիզուներով դաստիարակութիւնները շնչել: Մի. այն ուսանական լիզուն պիտի մը. նայ:

— Ֆրանսացի ծանօթ հայասէր Պ. Լէոն Մարիէ, վերջերս Բարի զի մէջ նոր բանախօսութիւն մը ըրած է, իրեն նիւթ ունենալով «Հայաստանի կացութիւնն ու Եւ. ըրպայի պարտքը»: Մ. Մարիէ իր այդ բանախօսութեան մէջ ինչ ինչ նշաններէ և ինչ ինչ աղբիւրներէ քաղած տեղեկութիւններէն հետեւցնելով հաւանական նկատած է որ Պետութիւնը միջամտեն հա. յոց համար:

— Նախորդ թիւով Պուլոյ Ազգ. Հիւանդանոցի Որբանոցը թոքախ. տէ փորակուիլը իմացուցած էինք Այս անգամ կ'իմանանք թէ քա. զաքական ժողովը որոշած է լիա. մաթիս կամ Գազը թաղը ընդարձակ չէնքի մը մէջ փոխադրել որբերը: Այս առթիւ ըլլալիք բա. ցաւիկ ծախուց համար Գարակէօզեան կտակի տարեկան 800 լիւրա տոկոսը պիտի յատկացուի:

— Հանգուցեալ Նուպար փաշա. ի ի յիշատակ կառավարութեան կողմէ Եգիպտոսի մէջ կանգնուե. լիք արձանին համար միջազգային յանձնախում մը կազմուել է, ո. բուն մասնակցած են Եգիպտոսի պետական բարձրաստիճան անձեր, յայտնի դրամատէրներ և ծանօթ վաճառականներ ամեն ազգէ:

— Պուլոյ Ազգ. Հիւանդանոցի որբանոցին մէջ երեւան կրած թո. քախտի մասին լուրջ քննութիւն մը կատարելու և հարկ եղած մի.

ընդհանուր ձեռք առնելու համար, ճշգրիտ խորասանճեանի նախագա. հուլիսն ինքեքու բժշկական յանձնաժողով մը պիտի կազմուի եղբոր:

— Բարեկենդանի շաբթուն կար նոյ Սանասարեան վարժարանին մէջ, ինպատ տեղւոյն Աղջկանց վարժարանին ներկայացում մը տրուած է, որուն՝ կարնոյ Հիւպա տոնական մարմինը և կուսակալը ներկայ գտնուեց ու գումարներ նուիրեցր են:

— Շուկայի երկու քահանան. բուն, Տէր խորէն և Տէր Օհանի ու թաղականներու մէջ աւագերե. ցութեան խնդիր մը ծագած ըլլա. լով, այս անգամ Պատրիարքարա. նի կրօն. ժողովը գրած է Շուկա թէ միշտ Տէր խորէնը աւագերեց կը ճանչնայ:

— Հանգուցեալ Ե. Բուդաղեանի ժառանգորդները Շամախու գաւառակտին և պատուաւոր անձանց գիւմուսին վրայ, այդ քաղաքէն չուր բերելու համար կտակուած 50,000 թուրքին յատկացուցած են բարձրագոյն վարժարանի մը հաս. տատման:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Եւրոպական հանդէս մը Աննա. միթներու (Հնդկաչինաստանի մէջ) մեռելական սովորութեանց վրայ խիստ հետաքրքրական տեղեկու թիւներ տուած է:

Երբ Աննամիթներու մէջ մէկը մեռնի, անոր ազգականներն ու բա. բեկամները խիստ հսկողութիւն մը կը կատարեն մեռնողին վրայ իմա նախ համար թէ հոգին ինչ վիճա. կի մէջ պիտի մտնէ:

Եթէ մեռելին ոտքերը, մեռնե. լն քիչ յետոյ տաք եղած ըլլան, նշան է եղբոր թէ հոգին դժոխք

պիտի երթայ, իսկ եթէ գանկը տաք մնացած է, նշան է եղբոր թէ հոգին երկինք պիտի ելլէ: Եւ եթէ գանկը, փորը և ոտքերը տաք մնան ատկից ալ կը հետեցնեն ե. զեր թէ հոգին որոշեալ ժամանակէ մը վերջը հարուստ և ազնուական ընտանիքի մը մէջ պիտի մտնայ: Իսկ եթէ կոնակի վերի մասը տաք ըլլայ նշան է եղբոր թէ հոգին մու. րացկանի մը մարմինը պիտի անց նի. եթէ կոնակի վարի մասը տաք մնայ այն ատեն հոգին թուշուրի մը մարմնոյն մէջ պիտի մտնայ:

Եթէ մեռնելէն վերջը աչքերը բաց մնայ նշան է եղբոր որ հոգին մարդկային ձևին տակ հոգեփո. խութեան պիտի ենթարկուի այսին. քըն ուրիշ հոգի մը պիտի առնէ: սակայն դժբաղդ պիտի ըլլայ: Եթէ աչքերը նախ բաց ըլլալով յետոյ գոցուին, նշան է թէ հոգեփոխու. թեամբ երկրորդ կեանքը հանգարո պիտի անցնի: Եթէ բերանը բաց մնայ, այն ատեն մեռելին հոգին գէշ կերպարանափոխութիւններ պի. տի կրէ: Իսկ ձեռքին գոց մնալը հոգիին սատանայ ըլլալուն նշանն է եղբոր:

— Թոքերու առողջական վիճա. կը ստուգելու համար, երկայն շունչ մը առնելէ յետոյ, առանց նորէն շնչելու ծանր ծանր համբի. լու է. թոքախտաւոր մը տաննէն աւելի չի կրնար համբել, առանց նորէն օգ առնելու պէտքը ըզ. գալու: Իսկ թոքատապ ունեցողը 4-9 երկվայրկեան հազիւ կրնայ համբել. սակայն առողջ թոք ու. նեցողը 20 էն մինչեւ 32 երկվայր. կեան առանց շունչ առնելու կըր. նայ համբել:

— Գերման զինուորական բժիշկ մը յայտարարած է թէ միջոց մը գտած է, որով շատ գիւրու թեամբ

կրնայ գանադանել մարդու և ա. նասունի արիւնը, նոյն իսկ շա. բաթներէ ալ յետոյ: Այս գիւտին մեծ կարեւորութիւն տրուած է մանաւանդ այն ծառայութեանը համար որ կրնայ մատուցանել ըս. պաննութեանց պարագաներուն:

— Անցեալները Օտէսա պատա. հած ձիւնաբեր փոխորկի մը ա. տին 37 հոգի մեռած և ցուր. տէն ալ 26 հոգի սառած ինկած են ճամբան:

ԵՐԱՆԻՍԹԱՆԱ ԷՔՍԵՐԻՅԵԹ

(13 հունիսի 1908 թ. հինգշաբթի)

Էրմէնիսթանա Էրմէնիէրին մըգտարը Թիւրքիստէն վէ Գիւրտ լէրտէն Էքսէրիէթի օլտըղընը պէր վէճէի պալա իսպաթան սօնրա, մէսէլէյի մէտէնիէթ վէ աշվալը մալիյէ նօզթիի նազարըն տան տախի թէտըզը իտէլիմ:

Էրմէնիէրին միւթէմէտին պիր միլլէթ պուլընտըզ վէ ուլիւմ, ֆինուս ու սանաթ խուսուսաթըն տա պիւթիւն Շարգ միլլէթէրին տէ էն մահիր, էն զէքի պիր գալմ օլտըղընը Էքսէրալը սէյաշլա ընն, ժողրաֆիսթիէրին, միւսիօնէր լէրին վէ գոնսորսլարըն պիւա իսթիս նա րաբօրթլարը իլէ միւսպիւթ օլմաղլէ, Գիւրտլէր վէ Թիւրքիէր իլէ Էրմէնիէրի մէտէնիէթ նօզ թասընտան թաթպիգ իթմէթիգ բէք զայիտ օլաճագ տըր: Պախուսուս պու հազըզաթը կէնճ Թիւրքիէ. ըրին թիթի օլան Սիտհաթ փաշա տախի իթիւրաֆ իթմէթլէ պէրա. պէր, խուսուսի պիւր մէթթուպին տէ շու մաալտա եազմըշ ըտը. «Թիւրքիստա միւթէմէթին Էրմէ. նի, ըսւմ վէ սայիր խրիսթիյան միլլէթլէր մէտէնիէթ, ուլում ու

սանաթ նօզթաորնտան իսլամ վաթանտաշլարնա թաթպիգ օլը. նամաղ տէրէճէտէ իլէրլէթիլ վէ ի. լէրլէթիլ տէ օլտըզլարընտան, թա. պիւր միւթէրազըր պիր միլլէթ քէնտի մատիւնընտա պուլընտան միլլէթին հիւրմիւ ալթընտա գալ. մագ իսթէմէզ, իսլամլար խրիս. թիյան վաթանտաշլարը տէրէճէտի նէ կէլմէք իչիւն, պուլարըն եէնի թէրազըրլարթան մէնն իտուպ, 30 սէնէ միւթէմատիէն պիգ զօշ. մալըլըզ քի օնլարա եէթիլէլիմ. վէ պու մագսէտէ վասըլ օլմագ իչիւն տախի Գանուսը Էսասիյի նիքիապ իտուպ տէ, մէճիւր ու մուսիտէ իսլամ մէպուսլարըն Էք. սէրիլէթի իլէ խրիսթիյանլարը թէ րազըրտան մէնն իտէպիլիւրիլ, Էվրոբա տէվլէթլէրի իսէ օ վա. գըլթ քէնտիլէրի կիպի գանուսըն Է. սասի իլէ իտարէ օլընտան Թիւր. քիւնըն տախիլի իչլէրիլէ միւտա. իսէլէ իտէմէզլէր. . . .»

Ահվալի Մալիյէ նօզթաորն. տան պագտըղըմըզտա:

Թիւրքլէր պէօյիւք Էրմէնիս. թանըն եալընըլ շէհրիլէրինտէ միւթէմէթին օլուպ, Էքսէրի հիւ. քիւմէթտէն մաաշ ալան մէմուր. լարտան միւթէշէքթիլ տիլլէր:

Գիւրտլէր իսէ հիչ պիր սանա. ւթ, զրաաթ ու իլիմէ սահիպ օլ. մայուպ, չօպանլըզ վէ խըրսըլըզ լէ կէշինմէքտէ վէ մէմալիքին խա. րապիլէթինէ չալըշմագտան պաշ. գա պիր իչլէ մէշըու տէկիլ տիր լէր, Էվրոբանըն պազը թարաֆ. լարընտա, նէթէթիմ Աստրիատա Գիւրտլէր կիպի կէօշէպէ գապիլէ. լէր հուգուզը մէտէնիէթտէ մահ. ըում պրագըլմըշ տըր. Էօյլէթի օն լար ինթիսապաթա տախի իլթի. րաք իտէմէզլէր:

Էրմէնիսթանըն, եանի Էրզրում, Պիթիս, վան, խարբիւր վէ Տի. արպէթիլ վիւայէթլէրին զրաաթը ու սանաթը ումումէն Էրմէնիլէր

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՅԵՐ [33]

(ՊԱՏԿԵՐ ՄԵ ՏԱԿԱՎԱՅԱՍԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

Աս զէպքերու միջոցին հազիւ երկու տարի ալ կը շարունակուի իրենց գիւղական վարժարանը, ա'յնքան ատեն, որքան Տէր վահան ու Գուրգէնը քաղքի բանտի մէջն էին: Երբ անոնք անդարձ կիւր պով կաքտուրուին իրենց հայրենի երկրի բանտէն, ծուռ կրպօն իր ձին կ'ըսկսի խաղցնել, կառավա. րութեան մէջ քանի խտուրթիւններու ու խուզար. կութեանց վրայ «Համերայխութիւն» ընկերութիւնն առ ժամանակ մը կը զգարի եւ տանկական քմահաճոյ. քի համաձայն բարձի թողի կը լինի: Ծուռ կրպօն վալի փաշայի ու իր տրքանիակներու կողմէն կը քաջալերուի ու կը հրահանգուի իր շահատակու. թեանց մէջ: Օր մ'ալ Փաշայ էֆէնիլի բացարձակ հրամանով նախկին ժողովրդական գիւղապետը պաշ. տօնանկ կ'ըլլայ ու Ծուռ կրպօն՝ գիւղապետ կը կարգուի ֆ. . . գիւղին:

Ծուռ կրպօն, գիւղապետական գաւազանը ձեռքն առած, բացարձակ կերպով կուզէ իր բոլոր վատ մտքերն ու քայքայիչ գաղափարները ի գործ դնել ու իր Հայրենի գիւղը աւերման առաջնորդել: Իր պաշտօնավարութեան կտրճ միջոցի մէջ, կը յաջողի շատ չարիքներ մտածել, ու գէշ ծրագիրներ շինել:

Գիւղի մեծամասնութիւնը, իր բոլոր ուժով գէմ էր, այս ծուռ պաշտօնավարութեան, մանաւանդ Գուրգէնի սրտով ու մտքով անսոք երիտաս. րդները որոց խորագետն էր Սահակը:

— Սահակ օր մ'իր գաղափարակիցներու հետ գիւղէն դուրս սարի մը սրտի վրայ բուսած հսկայ կաղնիներու ներքեւ ժողով մը կը կազմէ, ու ի-

րենց գիւղական կեանքի ներկայն ու ապագան իր բոլոր երեւոյթներով խորհրդածութեան կառնին: Վեց—հօթի զեղըուկ կտրիճներ էին այդ ժողովա. կաններն որոնք Գուրգէնի վարժապետութեան օրով Ս. Աստուծանց զպրօքէն ելած էին, իրենց ժողովա. տեղին գիւղի մանկէն բարձր ու անտառուտ սարերէն մէկուն կրճքին վրայ հսկայ կաղնիներով չըջապատուած բարձրաւանդակ մ'էր: Պահ մ'առնինքն ալ լուռ ու մուռն նստած, աչքերին զէպի գիւղն ու իրենց պատանեկութեան յիշատակները օրորող վարժարանը յառած, յուզուած մտքով կը գիտէին այդ տեսարանը, ու կը մտորեւէին իրենց ուսանո. ղական կիտնքի անուշ օրերը, կը յիշէին իրենց սի. բիլի ուսուցիչն ու անձնագոհ Տէրաէրը, որ հակա. ռակ իրենց անձնուիրութեան ու Հայրենասիրու. թեան Ծուռ կրպօյի նկատ կեղտոտ արարածի մը մատնութեամբ օտար աշխարհները վտարուած, ի. բրենց գիւղի ճակատագիրը այդ վատ լրտեսի ձեռքն անցած էր:

Այս զգածուած լուրթիւնը Սիրաքեան Սահակը խզելով իր ընկերներուն կըսէ. «Ներայրներ, Մենք թէեւ զեռ երիտասարդ ու անփորձ կեանքի շատ մը խնդիրներու մէջ, բայց մեր աչքով տեսած ու մեր ականջով լսած շատ մը զէպքեր ու պատահարները, կարծեմ յաւական փորձառութիւն տուին մեզի մեր գիւղի ու համայնքի կեանքով հետաքրքրուելու: Մենք մեր գիւղը ինչ ցանկալի կացութեան մէջ գտանք երբեմն, ու հիմակ որք'ան տխուր վիճակի մը դատապարտուած է ան: Մեր ազնիւ Տէրաէրն ու վարժապետը չղթայալապ օտար երկիրները արտու. րուեցան: Մեր վարժարանը փակուեցաւ, մեր եկե. ղեցին քոցուեցաւ, միւր գիւղի սիրտն ու ջիղը եղող «Համերայխութիւն» խանգարուեցաւ: Մեր անկեղծ գիւղապետը գործէ գաղթեցաւ, միւր զէնքերէն շա. տերը Տաճիկ կառավարութիւնը գրաւեց, ու մեր գիւղական միաբանութիւնը երկպառակեց, ասոնց

ամենու տեղ մեզի Ծուռ կրպօ մը գիւղապետ կար. գեց, այն վատ մարդը, որ իր գարշելի մատնու. թիւններով այս բոլոր չարիք թափեց մեր գլխին: Մենք հիմակ ինչպէս կրնանք աս տեսակ յայտնի լրտեսի մը քմահաճոյքին ծառայել ու մեր գիտակ. ցութեան ձայնը խեղդել: Եղբայրներ, այսօր մեր մեծերը իրենց ցաւերու մէջ շուարած են, մենք պարտաւսն ենք այս անտանիլի կացութեան վերջ ը տալ ու մեր գիւղը ազատել այդ ծուռ գէշու. թիւններէն: Կ'աղաչեմ եղբայրներ ու երզում կու. տամ ձեզի մեր նահատակ վարժապետի արիւնով ս. սիրելի ուսուցիչ Գուրգէնի շղթաներով, ինչ որ պիտի վճենք հիմա ու յետոյ գործադրենք, մինչ. չեւ Գերիզմանը գաղտնիք մնայ մեզի:

Սահակու այս յուզուած խօսքերը ցնցիչ տպաւո. րութիւն մ'առաջ կը բերեն իր ընկերակից ժողո. վականներու վրայ, ու անոնցմէ մէկը կ'առաջարկէ որ եւ է միջոցաւ մը, մէջտեղէն վերցնել Ծուռ կրպօյի գոյութիւնը:

Սահակու այս յուզուած խօսքերը ցնցիչ տպաւո. րութիւն մ'առաջ կը բերեն իր ընկերակից ժողո. վականներու վրայ, ու անոնցմէ մէկը կ'առաջարկէ որ եւ է միջոցաւ մը, մէջտեղէն վերցնել Ծուռ կրպօյի գոյութիւնը:

Ամենքը մէկէն կը համաձայնին այդ մտաին ու կ'որոշուի որքան կարելի է շուտ այդ կեղտոտ գա. ւաճանի մահը փութացնել: Այս որոշումն ու անոր գործադրութիւնը գաղտնի պահելու համար, ամենքն ալ իրարու հետ գրկախառն երգում կ'ընեն:

Ղ. Պ. Նահապետեան

(Շարունակելի)

